Հաստատում եմ
Դպրոցի տնօրեն՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան
քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

6-րդ դասարան

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների
պլան

Դասղեկ՝ Շ.Եղիազարյան

2023–2024 ուս.տարի

1. Նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

- Սահմանել օրվա ռեժիմ և հետևել նրա կատարմանը:
- Հետևել սահմանված սանիտարահիգենիկ կանոնների պահպանմանը:
- Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնատեխնիկական միջոցների և այլ նյութերի օգտագործման և պահպանմանուղղությամբ:
- Վերահսկել աշակերտների ուսումնական գործընթացը, օգնել հաղթահարելու ուսման ընթացքում ծագած դժվարությունները, ուսումնականգործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ, կազմակերպել խորհրդատվություններ:
- Համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ կատարել սովորողների ուսումնական գործունեության շարժառիթների ուսումնասիրություն:
- Զարգացնել սովորողների կամային հատկանիշները և սեփական ուժեղ ու թույլ կողմերի նկատմամբ քննադատական մտածողությունը: Անցկացնել ինքնազարգացման գործնական աշխատանքներ, այդ ուղղությամբ համագործակցել ծնողների, մանկավարժների հետ՝ կիրառելով համագործակցության տարբեր ձևեր:
- Ինտերակտիվ խաղերի, բանավեճերի, քննարկումների միջոցով սովորողի մեջ զարգացնել քաղաքացու այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ կամավորությունը, համագործակցությունը, հանդուրժողականությունը, քննադատական մտածողությունը, բանավիճելու հմտությունը, ինքնուրույնորոշումներ կայացնելը:

2. *Հայեցի դաստիարակություն*

2.1- հոգևոր դաստիարակություն

Սովորողների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Ամրապնդել սովորողների մոտ և ձևավորել մարդասիրական աշխարհայացք: Ազգային դիմագիծը պահպանելու քրիստոնեական հավատով ձեռք բերած հոգևոր արժեքները պահելու և սերունդներին հայեցի դաստիարակելու համար:

2. 2.- Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ զարգացնել գեղեցիկը մարդու, բնության, արվեստի մեջ տեսնելու ու գնահատելու կարողություններ: Կազմակերպել մշակութային միջոցառումներ, էքսկուրսիաներ՝ շփվելու գեղեցիկի դրսևորման զանազան ձևերի հետ:

2.3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտների մեջ սեմանել սեր և հարգանք հայրենիքի նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորելհայրենասիրություն: Զրույցների բանաստեղծությունների միջոցով նպաստել հայրենասիրական դաստիարակությանը:

2. 4- Ֆիզիկական դաստիարակություն

Սերտորոն համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ, ներգրավել նաև ծնողների և երեխաների համար կազմակերպվող թեմատիկ խորհրդատվություններին, կապված երեխաների ֆիզիկական առողջության պահպանման խնդիրների հետ: Անցկացնել քննարկումներսանիտարահիգիենիկ պահանջների անձնական հիգիենայի և այլ թեմաների շուրջ:

2. 5- Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Դասասենյակում, դպրոցի բակում, տանը, շրջակա միջավայրի մաքրման աշխատանքների կազմակերպում: Զրույցների օրինակների միջոցով աշակերտների մեջ սերմանել որոշակի աշխատանքներ կատարելիս, ծնողներին օգնելուցանկության ձգտում: Աշակերտներին մասնակից դարձնել դպրոցում անցկացվող շաբաթօրյակներին :

2.6- Բնապահպանական դաստիարակություն

Կարևորել շրջակա միջավայրի պահպանության խնդիրը: Մասնակից դարձնել բնապահպանական միջոցառումներին,հոգալ շրջակա միջավայրի մասին: Կազմակերպել քննարկում մարդու փոխհարաբերությունը աղտոտված շրջակա միջավայրի հետ, նրա ֆիզիկական ևհոգևոր առողջության պահպանման հիմնախնդիրները:

Քննարկել բնապահպանական խնդիրներ, որոնք առկա են մեր շրջապատում և համարվում են գլոբալ:

3. - Դպրոց-ընտանիք կապը

Ծնողական կոմիտեի և նախագահի ընտրության, անհատական և թեմատիկ խորհրդատվությունների, ծնողական ժողովների սեմինարների կազմակերպում: Ապահովել սովորողների ուսումնական գործունեության վերահսկումը ծնողների կողմից, որն էլ ավելի կնպաստի աշակերտների և դասավանդող ուսուցիչների արդյունավետ համագործակցությանը: Կիսամյակը երկու անգամ և անհրաժեշտության դեպքում արտահերթ հրավիրել ծնողական ժողովներ:

N	Դասաժամի թեման	Ամսաթիվը
1.	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:	05.09.2023
2.	Զրույց դպրոցականների պարտականությունների և իրավունքների մասին: Կազմակերպչական անկյան ձևավորում	12.09.2023
3.	Պահվածքը դպրոցում, դասարանում, դահլիճում և հասարակական այլ վայրերում՝ համաճարակի այս օրերին:	19.09.2023
4.	Իմ հայրենիքը իմ տունն է: Զրույց <<Արցախյան երկրորդ պատերազմը >> թեմայով:Նպատակը՝ ծանոթացնել պատերազմի առաջացման պատճառների և հետևանքների մասին:	26.09.2023
5.	Խնամքով օգտագործել դասագրքերը:	03.10.2023
6.	Զրույց՝ <<Մարդիկ, որոնց կուզեի ես նմանվել>>:	10.10.2023
7.	Զրույց՝ <<Երկրագունդը բոլորիս տունն է>> թեմայով:	17.10.2023
8.	<<Աշնանային պարահանդես>> թեմայով	07.11.2023

	զրույց։	
9.	Ովքեր են իմ ընկերները։	14.11.2023
10.	Ինչն եմ կարևորում ընկերության մեջ։	21.11.2023
11.	Զրույց՝ <<Իմ կատարած բարի գործը>>։	28.11.2023
12.	Մեր վատ սովորությունները և պայքարը դրանց դեմ։ Զրույց բանավեճ <<Կռվել, թե բանակցել>> թեմայով։ Բոլորն ունեն հավասար իրավունքներ։	05.12.2023
13.	<<Համակարգիչն ընկեր է, թե՝ թշնամի>>։	12.12.2023
14.	<<Մենք առողջ ապրելակերպի կողմնակիցներ ենք>>։	19.12.2023
15.	<<Իմ Նոր տարին>>։	26.12.2023
16.	<<Բոլորս տարբեր ենք>>։	09.01.2024
17.	<<Մեր ընտանիքը>>։	16.01.2024
18.	<<Պահպանենք բնությունը,պահպանենք կյանքը>>։Էքսկուրսիա՝ շփվելու գեղեցիկի դրսևորման զանազան ձևերի հետ։	23.01.2024
19.	<<Իրավունք և պարտականություններ>>։	30.01.2024
20.	<<Սուտը դատապարտում եմ>>։	06.02.2024
21.	<<Օգնիր ընկերոջդ մեծահոգաբար>>։	13.02.2024
22.	<<Լավ է հարուստ լինել, թե՞ հոգեպես հարուստ, ինչու՞>>։	20.02.2024
23.	<<Մեր կյանքը իմաստավորող արժեքները>>։	27.02.2024
24.	«Իմ մայրիկը»։	06.03.2024
25.	<<Ճանապարհորդության գարնանային առաջին ելևէջների ներքո>>։	13.03.2024
26	Բաց դաս	20.03.2024
27.	Սիրելի գրքի էջերով։	03.04.2024
28.	<<Գիրքը իմ բարեկամն է>>։	10.04.2024
29.	«Առողջ մարմնում՝ առողջ հոգի»։	17.04.2024
30.	«Մայրիկի օրը մեր ընտանիքում»։	25.04.2024
31	Բաց դաս	3.05.2024
32.	Անհավասարություն։ Նպատակը՝ տեղեկացնել անհավասարության և խտրականությանձևերի մասին։ Կազմակերպել էքսկուրսիա գյուղի տեսարժան վայրերը։	08.05.2024

33.	Հաղթանակների ամիս՝ մայիս … : Իմ անունն է Հայկական բանակ: Նպատակը՝ ամրապնդել գիտելիքները հայոց բանակիվերաբերյալ:	15.05.2024
34.	Ո՞րն է իսկական գեղեցկության գաղտնիքը	22.05.2024

Նախատեսում եմ նաև «Բաց դաս/եր/», որի/որոնց/ ընթացքում թեմայի ընտրությունը կկատարեն երեխաները՝ ընտրելով իրենց ավելի հոգեհարազատ թեման:

Digitally signed by
NAVASARDYAN
KHAZHAKN
1905610114
Date: 2023.09.26
13:09:43 AMT